Հանրային հեռարձակողի խորհուրդ

2022-2024

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2022

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Հանրային հեռարձակողի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) հանդիսանում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն», «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» և «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունների (այսուհետ՝ Ընկերություններ) կառավարման մարմինը, որն իր աշխատանքները կազմակերպում է աշխատակազմի միջոցով: Խորհրդի աշխատակազմը «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկն է:

2019-2020 թվականներին ՀՀ պետական բյուջեից Հանրային հեռարձակողի խորհրդին հատկացվել է համապատասխանաբար 7,397.2 մլն դրամ և 7,129.7 մլն դրամ, իսկ 2021 թվականին նախատեսվել է հատկացնել 7,051.2 մլն դրամ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

2019-2020 թվականներին Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը շարունակել է իրականացնել հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը, պատրաստել և օրական 24 ժամ հեռարձակել է հեռուստահաղորդումներ Առաջին (ՀՀ տարածքում և Արցախում) և միջազգային (ՀՀ տարածքում և տարածքից դուրս) ալիքներով:

2019-2021 թվականներին Հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված (2021 թվականին ծրագրված) հաղորդումների թեմատիկ ուղղությունները և ծավալները ներկայացված են **Աղյուսակ 1-ում**:


Աղյուսակ 1 *2019-2021 թվականներին Հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված/հեռարձակման ենթակա հաղորդումների փաստացի ծավալները՝ ըստ տեսալսողական ծրագրերի առանձին բաժինների*


ՀՀ	Տեսալսողական ծրագրերի առանձին բաժիններ	Առաջին ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալներ (ժամ)			Միջազգային ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալներ (ժամ)		
		2019թ. փաստացի	2020թ. փաստացի	2021թ. ծրագրված	2019թ. փաստացի	2020թ. փաստացի	2021 թ. ծրագրված
1	Լրատվական, լրատվական-վերլուծական	851.7	1 186.1	1 000.0	1 149.3	1 447.2	1 200.0
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	1 962.8	1 857.4	1 950.0	2 073.9	1 779.4	2 000.0
3	Մշակութային	1 671.8	1 944.2	1 500.0	1 340.7	1 454.5	1 400.0
4	Կրթական, մանկապատանեկան	614.9	660.6	650.0	410.1	523.0	860.0
5	Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության	749.3	965.0	750.0	964.8	1 199.2	950.0
6	Մարզական	185.1	111.0	400.0	79.1	86.9	400.0
7	Երաժշտական	704.6	454.4	750.0	720.6	555.0	100.0
8	Զվարճալի-ժամանցային	1 697.4	1 342.6	1 410.0	1 847.1	1 593.5	1 600.0
9	Հոլովակներ, այլ հաղորդումներ	310.5	256.6	350.0	162.5	139.3	250.0
Ընդամենը		**8 748.1**	**8 778.0**	**8 760.0**	**8 748.1**	**8 778.0**	**8 760.0**

Լրատվական և քաղաքական հաղորդումների պահանջի աճով պայմանավորված՝ 2020 թվականին 2019 թվականի համեմատ լրատվական և լրատվական-վերլուծական հաղորդումների քանակը թե՛ Առաջին և թե՛ Միջազգային ալիքների եթերով աճել են՝ 2019-2020 թվականներին կազմելով Առաջին

ալիքի եթերի համապատասխանաբար 9.7 և 13.5 տոկոսը, իսկ Միջազգային ալիքի եթերի՝ 13.1 և 16.5 տոկոսը: Քաղաքական, տնտեսական և հասարակական հաղորդումները 2019-2020 թվականներին կազմել են Առաջին ալիքի եթերի համապատասխանաբար 22.4 և 21.2 տոկոսը, իսկ Միջազգային ալիքի եթերի՝ 23.7 և 20.3 տոկոսը: Հանրային հեռուստաընկերության եթերում միշտ մեծ տեղ են գրավել մշակութային հաղորդումները, մասնավորապես՝ հայկական մշակույթին նվիրված հաղորդումներ: Մշակութային հաղորդումները 2019-2020 թվականներին կազմել են Առաջին ալիքի եթերի համապատասխանաբար 19.1 և 22.1 տոկոսը, իսկ Միջազգային ալիքի եթերի՝ 15.3 և 16.6 տոկոսը:


2019 թվականին ստեղծվել է Հանրային հեռուստաընկերության առցանց լրատվական կայքը՝ 1lurer.am հասցեով: Գործարկման առաջին ամսվա ընթացքում կայքն արձանագրել է բարձր դիտելիություն: Առաջին ամիսներին, ըստ Alexa վերլուծական համակարգի, Հայաստանում գտնվել է 73-րդ տեղում: 1lurer.am կայքում գրանցվում են այցելություններ աշխարհի գրեթե բոլոր մայրցամաքներից: Հատկապես Արցախյան երկրորդ պատերազմի առաջին 7 օրերին կայքում այցելությունների քանակը գերազանցել 1 միլիոնը (սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 10-ը՝ 1,240,478 այցելու): Շեշտակի ակտիվացել են նաև կայքում անգլերեն և ռուսերեն բաժինների դիտողականությունը (ռուսերեն բաժինը գործարկվել է Արցախյան պատերազմի առաջին օրը՝ սեպտեմբերի 27-ին): 2021 թվականի փետրվար ամսվա դրությամբ 1lurer.am կայքը, ըստ Alexa վերլուծական համակարգի, զբաղեցնում է Հայաստանում 33-րդ տեղը: 1lurer.am այցելում է ամսական 500,000-ից ավելի օգտատեր, իսկ այցելությունների աշխարհագրությունը գնալով ընդլայնվում է: Միջազգային հանրապետական ինստիտուտի պատվերով (International Republican Institute (IRI)) Breavis ընկերության կողմից ՀՀ տարածքում իրականացված հարցման արդյունքներով Հանրային հեռուստատեսության Առաջին ալիքը քաղաքական տեղեկատվություն ստանալու համար համարվում է 1-ին հարթակը:





65

Բացի այդ, հաշվետվության տվյալներով տարբեր կրթության մակարդակ ունեցող բոլոր տարիքային խմբերի համար թե՛ Երևանում և թե՛ հանրապետության ողջ տարածքում Հանրայինի Առաջին ալիքը հանդիսանում է տեղեկատվություն ստանալու համար ամենավստահելի աղբյուրը:



66

Պայմանավորված հանրության վստահությամբ և ելնելով հանրային շահերին վերաբերող հարցերի շուրջ հավաստի և ամբողջական տեղեկատվության տրամադրման Հանրայինի առաքելությունից՝ Հանրային հեռուստաընկերութունը 2021 թվականին նախատեսում է ստեղծել 24-ժամյա լրատվական հեռուստաալիք:

2019-2020 թվականներին Հանրային հեռուստաընկերության Առաջին և Միջազգային ալիքների հաղորդումները շարունակվել են հեռարձակվել օրական 24 ժամ: Առաջին ալիքի հեռարձակումը իրականացվում է ՀՀ ողջ տարածքում և Արցախում: 2016 թվականի նոյեմբեր ամսից սկսած՝ Երևան քաղաքում իրականացվում է թվային հեռարձակում HD ձևաչափով, իսկ ՀՀ մարզերում և Արցախում՝ թվային հեռարձակում SD ձևաչափով: Հանրային հեռուստաընկերության Միջազգային ալիքի հեռարձակման ընդհանուր տիրույթը ներառել է ամբողջ Եվրոպան, Ասիայի հյուսիս-արևելքի մեծ մասը (Միջին Ասիա, Իրան, Ռուսաստանի հիմնական մաս՝ բացառությամբ հեռավոր արևելյան հատվածի), Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրները, Հյուսիսային Ամերիկան և Հարավային Ամերիկայի հյուսիսային մասը: Շարունակվել են աշխատանքներն արտասահմանի հայկական մեծ համայնքներ ունեցող բնակավայրերում մալուխային կապուղիներով միջազգային ալիքը հեռարձակելու ուղղությամբ: Հանրային հեռուստաընկերությունն իր պաշտոնական վեբ կայքի միջոցով շարունակել է իրականացնել համաժամանակյա հոսքահաղորդում՝ հասանելի դարձնելով հաղորդումների առցանց դիտումը ամբողջ աշխարհում: Առավել կայուն առցանց հեռարձակում ունենալու արդյունքում տարեցտարի աճում են կայքով և բջջային հավելվածներով համաժամանակյա դիտումների քանակը և ընդհանուր դիտելիության մակարդակը: Տարեցտարի ավելացվում են կայքէջի միջոցով հասանելի և արխիվացված հաղորդումների քանակը:

«Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հոգևոր-մշակութային հեռուստաալիքի գործունեությունն ամբողջությամբ ուղղված է հոգևոր բարոյական արժեքների քարոզչությանը, ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ու արդի մշակութային կյանքի համակողմանի ներկայացմանն ու լուսաբանմանը:

2019-2020 թվականներին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը շարունակել է հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը, պատրաստել և օրական հեռարձակել է 18 ժամ տևողությամբ հեռուստահաղորդումներ: Ընդհանուր առմամբ, 2019-2020 թվականներին ընկերությունը հեռարձակել է համապատասխանաբար 6 570 ժամ և 6 590 ժամ հեռուստահաղորդումներ հետևյալ թեմատիկ ուղղություններով՝ մշակութային, մշակութային լրատվություն, հոգևոր, գիտահանրամատչելի և ուսումնական վավերագրական կինոնկարներ, երաժշտական ծրագրեր և համերգներ, մանկական, ուսումնական և այլ հաղորդումներ:

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ

2019-2020 թվականներին Հայաստանի հանրային ռադիոընկերության կողմից պատրաստվել և հեռարձակվել են ռադիոհաղորդումներ հետևյալ ծավալներով. «Առաջին ծրագիր» ռադիոալիք՝ օրական

24 ժամ, «Երկրորդ ծրագիր» ռադիոալիք («Իմ ռադիո»)՝ օրական 24 ժամ, «Հոգևոր-մշակութային» ռադիոալիք՝ օրական 24 ժամ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների և արտասահմանի համար օտարալեզու հաղորդումներ: 2020 թվականի հունվար ամսից եթեր է հեռարձակվում մայրաքաղաքային սփռման «Արևիկ» ռադիոալիքը, իսկ 2021 թվականի ընթացքում նախատեսվում է հեռարձակել մայրաքաղաքային սփռման «Մշակույթ» ռադիոալիքը:

2019-2021 թվականներին Հանրային ռադիոընկերության ռադիոալիքները, ինչպես նաև հեռարձակված (2021 թվականին ծրագրված) հաղորդումների թեմատիկ ուղղությունները և ծավալները ներկայացված են **Աղյուսակ 2-ում**:

Աղյուսակ 2. *2019-2021 թվականներին Հանրային ռադիոընկերության ռադիոալիքների, ինչպես նաև հեռարձակված/հեռարձակման ենթակա հաղորդումների փաստացի ծավալները՝ ըստ լսողական ծրագրերի առանձին բաժինների*

Հ/Հ	Լսողական ծրագրերի առանձին բաժիններ	Առաջին ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալներ (ժամ)		
		2019թ. փաստացի	2020թ. փաստացի	2021թ. ծրագրված
1	**«Առաջին ծրագիր» լսողական ծրագիր**	**8 760.0**	**8 784.0**	**8 760.0**
1.1	Լրատվական, լրատվական-վերլուծական	1 137.5	1 757.1	1 568.6
1.2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	2 660.8	2 348.7	2 659.3
1.3	Մշակութային	1 201.1	1 131.1	1 550.4
1.4	Երիտասարդական	90.7	-	-
1.5	Մանկապատանեկան	67.7	-	-
1.6	Կրթական և հայոց լեզվի	305.5	313.2	317.2
1.7	Ժամանցային	734.7	101.2	78.2
1.8	Հոգևոր	156.1	36.2	43.5
1.9	Երաժշտական	1 688.5	2 465.6	1 858.9
1.10	Առողջապահական	298.3	221.7	260.7
1.11	Այլ	419.1	409.2	423.2
2	**«Երկրորդ ծրագիր» («Իմ ռադիո») լսողական ծրագիր**	**8 760.0**	**8 784.0**	**8 760.0**
2.1	Ժամանցային	924.2	926.7	924.2
2.2	Կրթական և հայոց լեզվի	304.2	305.0	304.2
2.3	Լրատվական, լրատվական-վերլուծական	121.7	122.0	121.7
2.4	Քաղաքական, տնտեսական, հասարակական	23.5	23.6	23.5
2.5	Երաժշտական	7 000.1	7 019.3	7 000.1
2.6	Այլ	386.3	387.4	386.3
3	**«Հոգևոր-Մշակութային» լսողական ծրագիր**	**8 760.0**	**8 784.0**	**8 760.0**
3.1	Հոգևոր	1 641.6	1 646.0	1 641.6
3.2	Մշակութային	358.0	359.0	358.0
3.3	Երաժշտական	6 699.6	6 718.0	6 699.6
3.4	Մանկական	60.8	61.0	60.8
4	**ՀՀ տարածքում, Մերձավոր Արևելքի և հարևան երկրներում օտարալեզու լսողական ծրագիր**	**829.3**	**823.5**	**821.3**
4.1	Քաղաքական, տնտեսական, հասարակական	829.3	823.5	821.3
5	**Մայրաքաղաքային սփռման «Արևիկ» լսողական ծրագիր**	**-**	**8 784.0**	**8 760.0**
5.1	Մանկապատանեկան	-	8 784.0	8 760.0
6	**Մայրաքաղաքային սփռման «Մշակույթ» լսողական ծրագիր**	**-**	**-**	**8 760.0**
6.1	Մշակութային		-	8 760.0

Հանրային ռադիոընկերությունը, հավատարիմ մնալով որդեգրած եթերային քաղաքականությանը, շարունակում է պատրաստել և հեռարձակել ազգային, պետական և հանրային շահը կարևորող հաղորդումներ: Եթերացանցում ընդգրկված են հաղորդումներ, որոնք նվիրված են տարբեր ոլորտների՝ մշակույթ, գրական կյանք, արվեստագետներ, երիտասարդներ, հաշմանդամների խնդիրներ, ընտանիքների անդամների և սերունդների միջև փոխհարաբերություններ, սոցիալական կյանք, հեռարձակվել են կրթական, դաստիարակչական, հոգևոր, ժամանցային, երաժշտական, ինչպես նաև Հայաստան-Սփյուռք կապի ամրապնդմանը և ընդլայնմանը միտված հաղորդումներ:

2019-2020 թվականներին հանրության լայն շրջանակների ներգրավվածությամբ պատրաստվել են մի շարք հաղորդումներ, որոնց ուշադրության կենտրոնում են եղել հանրությանը հուզող խնդիրները՝ առողջապահություն, իրազեկվածություն և սեփական շահերի պաշտպանության մակարդակի բարձրացում, սպառողական իրավունք, էկոլոգիական խնդիրներ, գյուղացիներին հուզող հարցեր: Քաղաքական և տնտեսական իրադարձությունները վերլուծվել և բազմակողմանիորեն քննարկվել են տարբեր հաղորդումների շրջանակներում:

Քաղաքական, տնտեսական և հասարակական հաղորդումները 2019-2020 թվականներին կազմել են Առաջին ծրագրի եթերի համապատասխանաբար 30.4 և 26.7 տոկոսը: 2019 թվականին մեկնարկել է Հանրային ռադիոընկերության Առաջին ծրագրի հաղորդումների ցուցադրումը (վիզուալիզացիա) համացանցում և համաժամանակյա հեռարձակումը ֆեյսբուքյան էջում, ինչը մեծացրել է պաշտոնական ֆեյսբուքյան էջի և Ընկերության կայքէջի այցելությունները: Ընդլայնվել է Հանրային ռադիոալիքների սփռման տիրույթը տարածաշրջանում և բարելավվել հեռարձակման որակը սահմանամերձ տարածքներում:

Հանրային հեռուստաընկերությունը և Հանրային ռադիոընկերությունը հանդիսանում են Եվրոպական հեռարձակողների միության (EBU) ակտիվ անդամ, ինչի համար Հանրային հեռարձակողի խորհուրդը վճարում է տարեկան անդամակցության վճար: Անդամակցությունը հնարավորություն է ընձեռում Հայաստանը ներկայացնելու Եվրոպական հեռարձակողների միության կողմից կազմակերպվող մի շարք միջազգային միջոցառումների շրջանակներում (օրինակ՝ Եվրատեսիլ, Մանկական եվրատեսիլ և այլն), ինչպես նաև հեռուստադիտողներին հասանելի դարձնելու միջազգային խոշոր սպորտային և այլ միջոցառումները:

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Հանրային հեռարձակողի խորհուրդը իր գործունեության հիմքում դրել է հետևյալ հիմնական նպատակները.

- ապահովել շուրջօրյա հեռուստատեսային, ռադիո և տեսալսողական տեղեկատվության ստեղծումն ու տարածումը,
- ապահովել բազմազան տեղեկատվական, ճանաչողական, կրթական, մշակութային, ժամանցային բովանդակություն,
- տրամադրել անաչառ լրատվություն Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների մասին,
- լուսաբանել պետական իշխանության մարմինների և հանրային կառույցների գործունեության ուղղությունները, նպատակներն ու արդյունքները,
- ապահովել խոսքի ազատության, բազմակարծության և հասարակական համաձայնության հարթակ, ձևավորելով հանդուրժողականության և քաղաքակիրթ բանավեճի նորմեր, վարքագծի օրինակներ,
- կրթական, ճանաչողական, մշակութային և մանկական հաղորդումների միջոցով նպաստել հասարակության բարոյական և մարդկային հատկանիշների զարգացմանը, աջակցել երեխաների կրթությանն ու դաստիարակությանը,
- Սփյուռքի մեր հայրենակիցներին ներկայացնել Հայաստանի քաղաքական և մշակութային կյանքը, ներգրավել և մասնակից դարձնել հայաստանյան և համազգային ձեռնարկներին՝ նպաստելով Հայրենիք-Սփյուռք կապերի վերահիմաստավորմանը, Հայրենիքի զարգացմանը և հայրենադարձությանը:

Վերը նշված ծրագրի նպատակները, վերջնական արդյունքները, չափորոշիչները և թիրախային ցուցանիշները, ինչպես նաև կապը ՀՀ Կառավարության ծրագրի պահանջների հետ ներկայացված է աղյուսակ 3-ում (Հավելված 3-ի Մաս 3):

Աղյուսակ 3

«Պետական մարմնի ծրագրերի գծով վերջնական արդյունքի ցուցանիշները»

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով և ՀՀ գործող այլ ռազմավարական փաստաթղթերով սահմանված ՀՀ կառավարության քաղաքականության նպատակների և թիրախների հետ	Կապը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների և ցուցանիշների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը			
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը		
Ստեղծել և տարածել շուրջօրյա հեռուստատեսային, ռադիո և տեսալսողական տեղեկատվություն: Ապահովել բազմազան տեղեկատվական, ճանաչողական, կրթական, ժամանցային բովանդակություն: Տրամադրել անաչառ լրատվություն Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների մասին:	1042 - Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում	Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի օրիգինալ հաղորդումների տարեկան ժամաքանակ, չափման միավոր՝ ժամ	3030	2021	3030	2022	Հանրային հեռարձակողի խորհրդի ծրագրի նպատակները անմիջականորեն կապված են ՀՀ Կառավարության ծրագրի գրեթե բոլոր ուղղությունների հետ՝ լուսաբանման և հանրայնացման իմաստով: Մասնավորապես Հանրայինի արբանյակային հեռարձակումը աջակցում է Սիյոուքի հետ կապերի զարգացմանը՝ ՀՀ Կառավարության ծրագրում նշված խնդիրների լուծմանը:	Հանրային հեռարձակողի խորհրդի ծրագրի նպատակները լուսաբանման և հանրայնացման իմաստով կապված են ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների և ցուցանիշների հետ:
		Հանրային հեռուստաընկերության հաղորդումների բազմազանությունը ըստ հաղորդաշարերի քանակի, չափման միավոր՝ հաղորդաշար	55	2021	55	2022		
		Հանրային ռադիոընկերության Առաջին ծրագրի եթերում օրիգինալ /նոր/ հաղորդումների ապահովում՝ հեռարձակվող հաղորդումների ընդհանուր եթերաժամանակի մեջ, չափման միավորը՝ %	45-48	2021	45-48	2022		

3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Հանրային հեռարձակողի խորհրդի 2022-2024 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի քաղաքականության հիմք է հանդիսանում «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով Հանրային հեռարձակողի խորհրդին ամրագրված լիազորությունների իրականացումը:

2022-2024 թվականներին հեռուստառադիոհաղորդումների գերակա ուղղություններն են.

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար	**Հիմնավորումներ**
Տեղեկատվական, ճանաչողական, մանկական, կրթական, մշակութային և ժամանցային հեռուստատեսային բովանդակության ապահովում	Հանրային հեռարձակողի խորհրդի ծրագրի նպատակները անմիջականորեն կապված են ՀՀ Կառավարության ծրագրի գրեթե բոլոր ուղղությունների հետ՝ լուսաբանման և հանրայնացման իմաստով: Մասնավորապես Հանրայինի արբանյակային հեռարձակումը աջակցում է Սփյուռքի հետ կապերի զարգացմանը՝ ՀՀ Կառավարության ծրագրում նշված խնդիրների լուծմանը:
Հանրային շահերին վերաբերող հարցերի շուրջ հավաստի և ամբողջական տեղեկատվության տրամադրման նպատակով 24-ժամյա լրատվական հեռուստաալիքի ստեղծում և բարձր դիտելիության ապահովում:	
Հանրային հեռուստաընկերության հաղորդումների բազմազանության ապահովում՝ ըստ հաղորդաշարերի քանակի	
Հանրային հեռուստաընկերության օրիգինալ հաղորդումների տեսակարար կշռի ավելացում	
Ինտերնետ հարթակներում առցանց հանրային հեռուստածրագրի բարձր դիտելիության ապահովում	
Հանրային ռադիոընկերության օրիգինալ հաղորդումների տեսակարար կշռի ավելացում	
Տեղեկատվական, ճանաչողական, մանկական, կրթական, մշակութային և ժամանցային ռադիո բովանդակության ապահովում	
Ինտերնետ հարթակներում առցանց ռադիոծրագրի բարձր դիտելիության ապահովում	
Հոգևոր-մշակութային հաղորդումների հեռարձակման ապահովում	

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՏԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

4.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

Դասիչը		Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
Ծրագիր	Միջոցառում				
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1042	11001	Հանրային հեռարձակողի խորհրդի կառավարում, համակարգում և մոնիտորինգ	Հանրային հեռարձակողի խորհրդի կառավարում, համակարգում և մոնիտորինգ		«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենք
1042	11002	Հեռուստատեսային ծառայություններ	Հեռուստատեսային հաղորդումների պատրաստում և հեռարձակում		«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենք
1042	11003	Ռադիո ծառայություններ	Ռադիո հաղորդումների պատրաստում և հեռարձակում		«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենք
1042	11005	Հոգևոր մշակութային հեռուստատեսային ծառայություններ	Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ		«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենք
1042	11007	Հանրային հեռարձակողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ	Հանրային հեռարձակողների ֆինանսատնտեսական գործունեության հիման կազմված ՖՀՄՄ համապատասխան ֆինասական հաշվետվությունների աուդիտի անցկացում		Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենք
Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1042	12001	Միջազգային կազմակերպություններին անդամակցություն	Միջազգային կազմակերպություններին Հանրային հեռարձակողների անդամակցության վճարներ		

4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

Հանրային հեռարձակողի խորհրդի կողմից իրականացվում է 1042 «Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում» բյուջետային ծրագիրը, որի միջոցառումներն են.

- 11001 «Հանրային հեռարձակողի խորհրդի կառավարում, համակարգում և մոնիտորինգ», որն իրականացվում է «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ի միջոցով,
- 11002 «Հեռուստատեսային ծառայություններ», որն իրականացվում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի միջոցով,
- 11003 «Ռադիո ծառայություններ», որն իրականացվում է «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի միջոցով,
- 11005 «Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ», որն իրականացվում է «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի միջոցով,
- 11007 «Հանրային հեռարձակողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ»,
- 12001 «Միջազգային կազմակերպություններին անդամակցություն:

Հանրային հեռարձակողի խորհրդի կողմից իրականացվող ծրագրի համար ընդհանուր առմամբ «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հատկացվել է 7,520.0 մլն.դրամ, սակայն համավարակով և պատերազմային իրավիճակով պայմանավորված իրականացվել են խնայողություններ և 390.4 մլն.դրամը փոխանցվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդին: Փաստացի 2020 թվականին Հանրային հեռարձակողի խորհրդի կողմից իրականացվող ծրագրի գծով ծախսը կազմել է 7,129.7 մլն դրամ: ՀՀ Ֆինանսաների նախարության կողմից սահմանված ֆինանսավորման նախնական ընդհանուր կողմնորոշիչ չափաքանակների համաձայն 2022 թվականին նույն ծրագրի իրականացման համար նախատեսվել է հատկացնել 6,606.6 մլն. դրամ (2023-2024 թվականների համար՝ տարեկան 6,966.1 մլն.դրամ), մինչդեռ Հանրային հեռարձակողի խորհրդի կողմից իրականացվող միջոցառումների գծով ընդհանուր ծախսը 2022 թվականի համար կկազմի 8,335.9 մլն. դրամ, իսկ 2023-2024 թվականների համար՝ տարեկան 8,366.9 մլն. դրամ: Արդյունքում 2022-2024 թվականների համար հաստատված չափաքանակների համեմատ 2022 թվականին անհրաժեշտ կլինի հավելյալ 1,729.3 մլն.դրամ, իսկ 2023-2024 թվականների համար՝ 1,400.8 մլն.դրամ (բացվածքը ըստ միջոցառումների տես ստորև ներկայացված աղյուսակում):

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2022-2024 թվականների համար սահմանված կողմնորոշիչ չափաքանակները՝ բաշխած ըստ միջոցառումների

ՀՀ	Միջոցառման անվանում	2020թ. փաստացի բյուջե	2021թ. հաստատ-ված բյուջե	ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2022-2024թթ. համար սահմանված կողմնորոշիչ չափաքանակները՝ բաշխած ըստ միջոցառումների		2022-2024թթ. ֆինանսավորման հայտ		Տարբերություն ֆինանսավորման հայտի և կողմնորոշիչ չափաքանակի միջև		Տարբերություն կողմնորոշիչ չափաքանակի և 2021թ. հաստատված բյուջեի միջև	
				2022թ.	2023-2024թ.	2022թ.	2023-2024թթ.	2022թ.	2023-2024թթ.	2022թ.	2023-2024թթ.
1	Հանրային հեռարձակողի խորհրդի կառավարում, համակարգում և մոնիտորինգ	111,844.1	174,125.5	165,847.6	165,847.6	169,435.6	169,435.6	3,588.0	3,588.0	-8,277.9	-8,277.9
2	Հեռուստատեսային ծառայություններ	5,756,595.7	5,651,595.7	5,283,881.6	5,594,382.4	6,991,595.6	6,991,595.7	1,707,714.0	1,397,213.3	-367,714.1	-57,213.3
3	Ռադիո ծառայություններ	909,706.0	959,406.0	892,247.6	941,321.2	910,247.6	941,321.1	18,000.0	-0.1	-67,158.4	-18,084.8
4	Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ	207,102.1	206,102.1	206,102.1	206,102.1	206,102.1	206,102.1	-	-	-	-
5	Հանրային հեռարձակողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ	–	8,700.0	7,200.0	7,200.0	7,200.0	7,200.0	-	-	-1,500.0	-1,500.0
6	Միջազգային կազմակերպություններին անդամակցություն	43,019.8	51,274.6	51,274.6	51,274.6	51,274.6	51,274.6	-	-	-	-
7	Ներդրումներ տեխնիկական վերազինման նպատակով	100,000.0	-	-	-	-	-	-	-	-	-
8	Հանրային հեռուստառադիոընկերության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	1,388.8	-	-	-	-	-	-	-	-	-
	Ընդամենը	**7,129,656.4**	**7,051,203.9**	**6,606,553.5**	**6,966,127.9**	**8,335,855.5**	**8,366,929.1**	**1,729,302.0**	**1,400,801.2**	**-444,650.4**	**-85,076.0**

Հանրային հեռարձակողի խորհրդի և նրա աշխատակազմի պահպանման համար 2022-2024 թվականներին հաստատված չափաքանակների համեմատ կպահանջվի հավելյալ 3.6 մլն.դրամի ֆինանսավորում: Այդ գումարով նախատեսվում է վերակնքել Հանրային ռադիոընկերության հետ նախկինում ունեցած տարածքի վարձակալության պայմանագիրը: Հանրային հեռարձակողի խորհրդի և աշխատակազմի գրասենյակային տարածքի վարձակալության դիմաց ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից դադարեցվել է 2019 թվականից, թեև անհատույց վարձակալությունը ֆինանսական խնդիրներ է առաջացնում Հանրային ռադիոընկերության համար:

«Հեռուստատեսային ծառայություններ» միջոցառման համար 2022 թվականին պահանջվող հավելյալ **1,707.7 մլն.դրամի** ֆինանսավորման անհրաժեշտությունը բացատրված է ստորև՝

1. «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Հանրային հեռուստաընկերության միջոցով իրականացվող միջոցառումների համար 2020 թվականի համեմատ հատկացվել է **500.0 մլն.դրամով** պակաս գումար՝ 400 մլն.դրամ «Հեռուստատեսային ծառայություններ» միջոցառումից և 100 մլն.դրամ՝ «Ներդրումներ տեխնիկական վերազինման գծով» միջոցառումից: 2022-2024 թվականների կողմնորոշիչ չափաքանակներով 2022 թվականի համար նախատեսված գումարը 2021 թվականի համեմատ կրճատվել է հավելյալ **367.7 մլն.դրամով**: Նշենք, որ 2020 թվականի հուլիսի 16-ին ընդունված «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 2020 թվականի օգոստոսի 7-ին) 29-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հանրային հեռարձակողների ֆինանսավորումը չի կարող պակաս լինել նախորդ տարվա բյուջետային ֆինանսավորման չափից: Ցանկանում ենք նաև տեղեկացնել, որ կրճատված 500.0 մլն.դրամը 2021 թվականին Հանրային հեռուստաընկերությունը նախատեսում էր ուղղել Ընկերության գլխավոր մասնաշենքում տեղակայված ԱՍԲ-1 նկարահանման տաղավարի մասնակի թվայնացման աշխատանքներին՝ հաշվի առնելով վերջինիս հրատապ անհրաժեշտությունը, իսկ 2022-2024 թվականներին այդ գումարով նախատեսվում էր մարել վարկային պարտավորությունները (մանրամասները ստորև 3-րդ կետում): Տեղեկացնենք, որ Ընկերության նկարահանման ամենամեծ՝ ԱՍԲ-1 և ԱՍԲ-7 տաղավարները դեռևս շարունակում են աշխատել անալոգային տեխնիկական միջոցներով, ինչն իր տեխնիկական բնութագրերով չի համապատասխանում թվային հեռարձակման պահանջներին: Հինգ տարի շարունակ Ընկերության ԱՍԲ-1 և ԱՍԲ-7 նկարահանման տաղավարների բոլոր նկարահանումներն իրականացնում է շարժական հեռուստակայանի (ՇՀԿ) թվային տեխնիկական միջոցներով, ինչն առաջացնում է ՇՀԿ-ի գերծանրաբեռնվածություն: ՇՀԿ-ն միակն է ՀՀ-ում, որի միջոցով իրականացվում են արտատաղավարային պետական և այլ կարևորագույն նշանակության բոլոր միջոցառումների նկարահանումները, իսկ վերջինիս հինգ տարվա ֆիզիկական մաշվածության և հնարավոր

խափանման արդյունքում ամբողջությամբ կխաթարվի Ընկերության թե՛ տաղավարային, թե՛ արտատաղավարային բոլոր միջոցառումների նկարահանումների բնականոն աշխատանքները, ինչն ուղղակի կարող է հանգեցնել հեռուստաընկերության եթերի դադարին: Այդ իսկ պատճառով Ընկերության ԱՍԲ-1 նկարահանման տաղավարի թվային տեխնիկական վերազինման գործընթացը դարձել է հրատապ առաջնահերթություն:

2. Տեղեկատվական հոսքերի սրընթաց զարգացման պայմաններում Ընկերության կարևորագույն մարտահրավերներից է լրատվական հեռուստաալիքների ու լրատվական կայքերի հետ մրցակցությունը, քանի որ Ընկերության կողմից լրատվության առանձին թողարկումներով մատուցումը շատ հաճախ չի ապահովում լուրերի տարածման օպերատիվությունը, ինչի արդյունքում հեռուստադիտողն իր պահանջմունքները բավարարում է լրատվական հեռուստաալիքների ու առցանց լրատվական կայքերի կողմից տարածվող շուրջօրյա տեղեկատվությամբ: Հաշվի առնելով լրատվական ալիքների բազմազանությունը և մատուցվող լուրերի որակը՝ Հանրային հեռուստաընկերությունը խիստ անհրաժեշտ է համարում նոր լրատվական ալիքի գործարկումը: Նոր լրատվական հեռուստաալիքի ստեղծման ու պատշաճ շահագործման նպատակով, բացի Ընկերության ներկայիս լրատվական ծառայության գծով առկա տարեկան ծախսերից, հավելյալ ընթացիկ ու կապիտալ բնույթի ծախսերի իրականացման անհրաժեշտություն է առաջանում: Մասնավորապես՝

- Լրատվական հեռուստաալիքի շուրջօրյա եթերի ապահովման նպատակով Ընկերությունը ներկայիս լրատվական ծառայության անձնակազմից բացի նախատեսում է ներգրավել հավելյալ ստեղծագործական, արտադրական և տեխնիկական մասնագետներ, ինչը նպատակ է հետապնդում ավելացնել լրատվության հաղորդման շրջանակներն ու ծավալները, պատրաստել ու հեռարձակել տարբեր թեմատիկ ուղղվածության (քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթության, գիտության և սպորտի, մշակութային, առողջապահական, պաշտպանության, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլն) լրատվական ու վերլուծական հաղորդումներ, հարզացրույցներ, փաստագրական հեռուստահաղորդումներ, քաղաքական երկխոսություններ, բանավեճեր և այլն:
- Լրատվական ծառայության առկա մարզային, Արցախի ու արտերկրի թղթակցական կետերի կողմից լրատվության ծավալների ավելացման, ինչպես նաև արտերկրում նոր թղթակցական կետերի ստեղծման միջոցով նախատեսվում է տեղեկատվության հավաքագրման աշխարհագրության ընդլայնում՝ ապահովելով օպերատիվ տեղեկատվության առաջինը ներկայացնելու հնարավորությունը, ինչպես նաև հայաշատ համայնքների ապրելակերպի ու առկա խնդիրների առավել մանրամասն լուսաբանումը,
- Լրատվական հեռուստաալիքի նոր կայքէջի գործարկման ու շահագործման նպատակով առկա անձնակազմից բացի ներգրավել լրացուցիչ մասնագետներ, ինչի միջոցով

հնարավոր կլինի առցանց ամենատարբեր հարթակներով առավել ինտենսիվ կերպով տարածել լրատվական հեռուստաալիքի կողմից մատուցվող տեղեկատվությունը, ինչպես նաև ապահովել ալիքի շուրջօրյա առցանց հեռարձակում ինտերնետային կայքէջի միջոցով, ինչը հնարավորություն կտա այն հասանելի դարձնել աշխարհի ցանկացած կետում բնակվող համայնքի ներկայացուցիչներին,

- Նախատեսվում է ոլորտի տարբեր ուղղվածության որակյալ մասնագետների ներգրավում՝ լրագրողներ, հադորդավարներ, օպերատորներ, վերլուծաբաններ, խմբագիրներ և այլն, ինչը հնարավորություն կստեղծի լրատվության առավել թարմ, բազմակողմանի ու ժամանակակից տենդենցներին համապատասխանող ներկայացում՝ ուղեկցելով ժամանակակից տեսաձայնային էլեմենտներով:

Ընկերությունը լրատվական հեռուստաալիքի գործարկման գծով նախատեսվող արտադրական ծավալների աճի արդյունքում նախատեսում է նաև գործուղման, նկարահանումների տրանսպորտային ապահովման, ինչպես նաև տեղական ու հայտնի արտասահմանյան լրատվական գործակալություններից ստացվող լրատվության ծավալների ավելացում: Ավելին, հավելյալ ծախսերի անհրաժեշտություն է առաջանում նաև մայրաքաղաքային հեռարձակման և ինտերնետային կայքի միջոցով առցանց հեռարձակման ծառայությունների ձեռքբերման ուղղությամբ:

Ընդհանուր առմամբ լրատվական ալիքի ընթացիկ ծախսերը ապահովելու համար անհրաժեշտ է տարեկան 1,803.7 մլն.դրամ, որի մի մասը՝ 963.7 մլն.դրամը, կիրականացվի ՀՀ պետական բյուջեից առկա ֆինանսավորմամբ հատկացված լրատվական ծառայության ներկայիս ծախսերի հաշվին, իսկ հավելյալ **840.0 մլն.դրամի** տարեկան ֆինանսավորումը Ընկերությունը 2022-2024 թվականներին նախատեսում է լրացուցիչ ստանալ ՀՀ պետական բյուջեից: Քանի որ լրատվական հեռուստաալիքի մեկնարկը նախատեսվում է 2021 թվականին, ապա 2021 թվականին իրականացվելիք ծախսի ֆինանսավորման համար Ընկերությունը արդեն իսկ դիմել է ՀՀ վարչապետի աշխատակազմ (427.5 մլն.դրամի):

3. Նոր լրատվական հեռուստաալիքի ստեղծման ու շահագործման համար անհրաժեշտ կլինի նաև իրականացնել կապիտալ բնույթի ծախսեր՝ շենք-շինությունների հիմնանորոգում և տեխնիկական վերազինում, որի մանրամասները նույնպես ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: Ընկերության կողմից իրականացված հաշվարկների արդյունքում նոր լրատվական հեռուստաալիքի գործարկման նպատակով շենք-շինությունների և նկարահանման տաղավարների կառուցման և հիմնանորոգման, ինչպես նաև ժամանակակից տեխնիկական միջոցներով վերազինման ծախսերը կկազմեն ընդհանուր առմամբ մոտ 3.5 մլրդ.դրամ: Հաշվի առնելով բյուջետային միջոցների ներկայիս սղությունը՝ Ընկերությունը նախատեսում է նշված ծախսերը ֆինանսավորելու նպատակով ներգրավել վարկային միջոցներ՝ առավելագույնը 7

(յոթ) տարի ժամկետով՝ տարեկան մարելով 500 մլն.դրամ: Վարկը հնարավորություն կընձեռի հնարավորինս կարճ ժամկետներում իրականացնել բոլոր կապիտալ ծախսերը և սկսել ալիքի գործարկումը, սակայն վարկի մարումը Ընկերությունը նախատեսում է իրականացնել պետական բյուջեի միջոցների հաշվին, ինչի արդյունքում Ընկերությանը հարկավոր կլինի տարեկան մոտ **500.0 մլն.դրամ**, որի համար առաջարկում ենք վերականգնել վերոնշյալ կրճատված 500.0 մլն.դրամի ֆինանսավորումը:

Այսպիսով «Հեռուստատեսային ծառայություններ» միջոցառման գծով 2022 թվականին կպահանջվի հավելյալ 1,707.7 մլն.դրամ (500+840+367.7) ֆինանսավորում: 2023-2024 թվականների համար հավելյալ ֆինանսավորման գումարը կկազմի տարեկան 1,397.2 մլն.դրամ, քանի որ չափաքանակները ենթադրում են 310.5 մլն.դրամի աճ 2022 թվականի համեմատ:

«Ռադիո ծառայություններ» միջոցառման գծով 2022-2024 թվականների հաստատված չափաքանակների համեմատ նախատեսվում է հավելյալ 18.0 մլն.դրամի ֆինանսավորում, ինչը անհրաժեշտ է մինիմալ ծախսերը ապահովելու համար: 2023-2024 թվականների համար անհրաժեշտ ֆինանսավորման գումարը կկազմի տարեկան 941.3 մլն.դրամ և չափաքանակից ավել գումար չի պահանջվի:

Ընթացիկ բնույթի պարտավորությունների հաշվարկները, ըստ առանձին ծրագրերի և միջնաժամկետ կտրվածքով ծախսային գումարների ձևավորման գործում որոշիչ դեր ունեցող գործոնների բնութագրությունների, ներկայացվել են համապատասխան տեղեկանքներում:

Ծրագրի նպատակները, վերջնական արդյունքները, չափորոշիչները և թիրախային ցուցանիշները, ինչպես նաև կապը ՀՀ կառավարության ծրագրի պահանջների հետ ներկայացված է Հավելված 3-ի Մաս 3՝ «Պետական մարմնի ծրագրերի գծով վերջնական արդյունքի ցուցանիշները», աղյուսակում:

4.3. Նոր նախաձեռնությունները

Հանրային հեռարձակողի խորհուրդը 2022-2024 թվականների ընթացքում չի նախատեսում նոր նախաձեռնություններ:

5. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Բացի պետական բյուջեից ստացվող եկամուտներից, ոլորտի կազմակերպությունները եկամուտներ են ստանում նաև վճարովի ծառայությունների մատուցումից՝ գովազդից, վճարովի եթերաժամանակից, հովանավորչությունից, ֆիլմերի և հաղորդումների պատրաստումից, հեռարձակումից և վերահեռարձակումից, ինչպես նաև նախընտրական քարոզչությունից և այլն (Ընկերությունների եկամուտների կանխատեսումը 2022-2024 թվականների համար տե՛ս հավելված 7-ում):

Վճարովի ծառայություններից ստացված եկամուտներն ուղղվում են կազմակերպությունների տեխնիկական վերազինմանը, հեռուստահաղորդումների հեռարձակման իրավունքի ձեռքբերմանը, շահութաբաժինների վճարմանը և այլ անհրաժեշտ ծախսերի իրականացմանը:

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հանրային հեռարձակողի խորհրդի կողմից իրականացվող ծրագրերը չեն առնչվում ՀՀ Կառավարության որոշումներով հաստատված ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի հետ (տե՛ս հավելված 8):

7. ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ (ԽԱՉՎՈՂ) ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հանրային հեռարձակողի խորհուրդը 2022-2024 թվականների ընթացքում միջոլորտային (խաչվող) բնույթի առանձին քաղաքականություններին առնչվող ծրագրեր/միջոցառումներ չունի:

8. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հանրային հեռարձակողի խորհուրդը 2022-2024 թվականների ընթացքում արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվող ծրագրեր չի նախատեսում:

9. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2022-2024 թվականների համար Հանրային հեռարձակողի խորհրդի միջոցառումների գծով ընդհանուր առմամբ նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 8,335.9 մլն.դրամ, 8,366.9 մլն.դրամ և 8,366.9 մլն.դրամ, որի գծով ամփոփ տեղեկատվությունը ներկայացվել է հավելված 10-ում:

10. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Հանրային հեռարձակողի խորհրդի 2022-2024 թվականների ՄԺԾԾ հայտում էական ռիսկեր, մասնավորապես՝ առանձին ծրագրերի հիմքում ընկած ենթադրությունների իրատեսականության հետ կապված անորոշություններ, որոնք կարող են բացասաբար ազդել ոլորտի ՄԺԾԾ հայտով ներկայացված նպատակների և արդյունքների ձեռք բերման վրա չեն սպասվում:

Հավելված N 3. Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ

Պետական մարմնի անվանումը՝	Հանրային հեռարձակողի խորհուրդ

ՄԱՍ 1. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1.Հիմնական ռազմավարական նպատակները և գերակա վերջնական արդյունքները՝
Հանրային հեռարձակողի խորհուրդը իր գործունեության հիմքում դրել է հետևյալ հիմնական նպատակները. - ապահովել շուրջօրյա հեռուստատեսային, ռադիո և տեսալսողական տեղեկատվության ստեղծումն ու տարածումը, - ապահովել բազմազան տեղեկատվական, ճանաչողական, կրթական, մշակութային, ժամանցային բովանդակություն, - տրամադրել անաչառ լրատվություն Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների մասին, - լուսաբանել պետական իշխանության մարմինների և հանրային կառույցների գործունեության ուղղությունները, նպատակներն ու արդյունքները, - ապահովել խոսքի ազատության, բազմակարծության և հասարակական համաձայնության հարթակ, ձևավորելով հանդուրժողականության և քաղաքակիրթ բանավեճի նորմեր, վարքագծի օրինակներ, - կրթական, ճանաչողական, մշակութային և մանկական հաղորդումների միջոցով նպաստել հասարակության բարոյական և մարդկային հատկանիշների զարգացմանը, աջակցել երեխաների կրթությանն ու դաստիարակությանը, - Սփյուռքի մեր հայրենակիցներին ներկայացնել Հայաստանի քաղաքական և մշակութային կյանքը, ներգրավել և մասնակից դարձնել հայաստանյան և համազգային ձեռնարկներին՝ նպաստելով Հայրենիք-Սփյուռք կապերի վերահմաստավորմանը, Հայրենիքի զարգացմանը և հայրենադարձությանը:
2. Բյուջետային ծրագրերում կատարվող հիմնական փոփոխությունները՝
2022 թվականին բյուջետային ծրագրերում փոփոխություններ չեն նախատեսվում:
3.Կապիտալ բնույթի հիմնական միջոցառումները՝
2022 թվականին կապիտալ բնույթի միջոցառումներ չեն նախատեսվում:
4. Ֆինանսական ակտիվների կառավարմանն առնչվող միջոցառումները՝
2022 թվականին Ֆինանսական ակտիվների կառավարմանն առնչվող միջոցառումներ չեն նախատեսվում:

Հավելված N 3. Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ

Պետական մարմնի անվանումը՝	Հանրային հեռարձակողի խորհուրդ

ՄԱՍ 2. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Դասիչ		Ծրագիր/Միջոցառում	2020թ. Փաստացի	2021թ սպասվող	2022թ եռամսյակ	2022թ կիսամյակ	2022թ ինն ամիս	2022թ տարի	2023թ	2024թ
			(հազ. դրամ)	(հազ. դրամ)	(հազ. դրամ)	(հազ. դրամ)	(հազ. դրամ)	(հազ. դրամ)	(հազ. դրամ)	(հազ. դրամ)
Ծրագիր										
